ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մայիսի 2020թ. թիվ 391-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով և «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետով, հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ Ա.Ռևազյանի զեկուցագիրը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից Ա.Ռևազյանին հատկացնել 60000 /վաթսուն հազար/ դրամ՝ «Լոռին այսօր» խորագիրը կրող լուսանկարչական մրցույթի մրցանակակիրներին պարգևատրելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին՝ մեկամսյա ժամկետում կատարել գումարի վճարում:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. մայիսի 11
ք.Վանաձոր

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

«Լոռին այսօր» խորագիրը կրող լուսանկարչական մրցույթի մրցանակակիրներին պարգևատրելու համար /1-ին տեղ 25000 դրամ, 2-րդ տեղ 20000 դրամ, 3-րդ տեղ 15000 դրամ/ խնդրում եմ Ձեր աջակցությունը 60000/վաթսուն հազար/ դրամի չափով:

ՀՀ Լոռու մարզպետարան կրթության, մշակույթի և

սպորտի վարչության, մշակույթի և սպորտի բաժնի պետ Ա. Ռևազյան